

Հաստատում եմ՝ 4 հունվարի 2024 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական զծով պրոռեկտոր,

Վիստիսյական գիտությունների դոկտոր,

Վերականգնողական գիտությունների թեկնածու,

սիրոֆեսոր Ավետիսյան Պարզն Սերգեյի



**ԿԱՐՏԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

*Աննա Հրանտի Ավետիսյանի «ԲՈՂՈՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ» Ժ.02.02-«Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին*

Ժամանակակից թվային աշխարհում մեծապես կարևորվում է բողոքի առցանց արտահայտման հարացույցը, որին առնչվող լեզվաբանական ուսումնասիրությունները խարսխվում են տարբեր գիտակարգերի փոխկապակցվածության և փոխալսմանավորվածության վրա: Բողոքի արտահայտման բազմակողմ գործառույթները և տարաբնույթ ձևերի բազմազանությունը նոր շունչ են հաղորդում միջմշակութային և գործաբանական ուսումնասիրություններում ընդունված բողոքի արտահայտման ավանդական մոտեցմանը՝ առաջադրելով նորագույն մեխանիզմների և սկզբունքների գործիքակազմ: Այդ գործիքակազմի ուսումնասիրությունը նպաստում է ոչ միայն միջմշակութային հաղորդակցության դիտանկյունից միջանձնային կայուն հարաբերությունների ստեղծմանը, այլև արդյունավետ հաղորդակցման խթանմանը:

Մույն ատենախոսությունն արդիական է, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը խթանել է սոցիալական հարթակներում բողոք արտահայտող զբառումների կտրուկ աճը և ձևափոխել է բողոքի արտահայտման ավանդական միջոցները և ձևերը:

Սույն ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է այն փաստով, որ առաջին անգամ փորձ է արվում համապարփակ քննության ենթարկել բողոքի արտահայտման խոսքային ակտի իլոկուտիվ ուժը (ոազմավարությունը) և պերլոկուտիվ ազդեցությունը՝ լեզվագործաբանության և մշակութաբանության դիտանկյունից՝ վեր հանելով բողոքի արտահայտման ձևերի առանձնահատկությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում:

Աշխատանքի տեսական արժեքն այն է, որ հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել համացանցային խոսույթում խոսքային այլ ակտերի հետագա ուսումնասիրությունների համար և կարող են նպաստել լեզվաբանական մի շարք հարակից գիտակարգերի զարգացմանը:

Գործնական արժեքը պայմանավորված է այն փաստով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են ոչ միայն կիրառվել լեզվագործաբանության, լեզվամշակութաբանության, կիրառական լեզվաբանության, հաշվողական լեզվաբանության դասընթացներում, այլև հնարավորություն ընձեռել հետազայում ստեղծել բողոքի առցանց գործիքակազմ. որը նպատակաուղղված կարող է լինել բողոքի ինքնաշխատ գտման մեխանիզմների մշակմանը:

Ատենախոսությունը ներկայացված է հետևյալ կառուցվածքով՝ ներածություն, երեք գլուխներ /իրենց ենթագլուխներով/, եզրակացություն, գրականության ցանկ:

Ներածության մեջ ատենախոսը հիմնավորում է թեմայի արդիականությունը և նորույթը, սահմանում է ուսումնասիրության նպատակը և խնդիրները, տեսական ու գործնական նշանակությունը, նախանշում է պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլխում դիտարկվում են խոսքային ակտերի տեսության հիմնադրույթները և հայեցակարգերը, ներկայացվում են տարբեր լեզվաբանների կողմից առաջադրած խոսքային ակտերի դասակարգումները՝ որոշարկելով բողոքի դերը այդ դասակարգումների շրջանակում: Մանրակրկիտ վերլուծության են ենթարկվում նաև բողոքի ոազմավարությունների դասակարգումները, ինչպես նաև քաղաքավարության տեսության տեսական հիմքերը՝ ընդգծելով բողոքի արտահայտման խոսքային ակտի

վերք: Ներկայացվում են համացանցային խոսույթի առանձնահատկությունները բողոքի արտահայտման համատեքստում:

Երկրորդ գլխում գուգոտրական վերլուծության են ենթարկվում բողոքի արտահայտման ռազմավարությունները՝ վեր հանելով դրանց նմանությունները և տարբերությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում: Անդրադարձ է կատարվում բողոքի արտահայտման լեզվական միջոցների բնույթանք՝ որոշարկելով դրանց առանձնահատկությունները հայերենում և անգլերենում, ինչպես նաև դիտարկվում են պեյրոկուտիվ ազդեցության դրսևորումները՝ առանձնացնելով հայերեն և անգլերեն գրառումներում դրանց նմանությունները և տարբերությունները:

Երրորդ գլխում բնույթանք են ենթարկվում բաղաբավարության ռազմավարությունների խախտման օրինաչափությունները բողոք արտահայտող գրառումներում՝ բնոգծելով դրանց մշակութահեն առանձնահատկությունները, դիտարկվում է հումորը՝ որպես մշակույթի արտահայտման միջոց բողոքի արտահայտման գործընթացում և վեր է հանվում նմանությունները և տարբերությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում:

Եզրակացության մեջ ամփոփվում են աշխատանքի հիմնական արդյունքները, համակարգվում և ձևակերպվում են կարևորագույն դրույթները:

Ատենախոսությունն աչքի է ընկնում կառուցվածքային յուրահատկությամբ և վերլուծական նյութի բազմազանությամբ: Աշխատանքում զետեղծված աղյուսակները և գծապատկերները նպաստում են քանակական տվյալների համակարգված ներկայացմանը:

Բարձր գնահատելով Աննա Ավետիսյանի կատարած աշխատանքը, այնուամենայնիվ, կցանկանայինք որոշ հարցադրումներին պարզաբանումներ ստանալ.

1. Ատենախոսության ներածության մեջ հետազոտության օբյեկտն ու առարկան թվում է սերտաճած են:
2. Կարո՞ղ ենք արդյոք համացանցում բողոքը դիտարկել որպես իրականության խեղաթուրում, կամ նույնիսկ բացասական գովազդի ցուցիչ, քանի որ բողոքի բուն պատճառները մեզ հիմնականում հայտնի չեն:

3. Հայտնի է, որ անգլերեն համացանցային խոսույթին բնորոշ է հապավումների և կրճատ տարբերակների կիրառումը: Ի՞նչ կարող էք ասել նման կիրառության մասին հայերեն համացանցային խոսույթում, մասնավորապես՝ բողոք արտահայտող գրառումներում:
4. Բողոքի արտահայտման պերլոկուտիվ ազդեցությունների դրսևորումները նկատելի են հասցեատիրոջ գրառումներում: Նպատակահարմար չէր լինի այդ գրառումներին զուգահեռ նաև ընդգրկել օգտատիրոջ բողոքը՝ ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու նպատակով:
5. Ատենախոսության մեջ հեղինակը նշում է, որ հայկական համացանցային խոսույթին բնորոշ է ներողության խոսքային ակտի ներառումը բողոքի արտահայտման պերլոկուտիվ ազդեցության դրսևորումներում: Հետաքրքիր կլիներ այն դիտարկել պայմանավորված սեռատարիքային գործոններով:

Նշված նկատառումները հայեցակարգային չեն և չեն ստվերում աշխատանքի գիտական որակն ու կարևորությունը, որն առանձնանում է տեսական և գործնական նյութի խոր վերլուծությամբ, հարցադրումների հստակ պարզաբանումներով, համապարփակ շարադրանքով և գիտական պատշաճ ոճով:

Ատենախոսության սեղմագիրը և ատենախոսի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացված պահանջներին, ինչն էլ հիմք է տալիս մեզ միջնորդել ԲՊՀ-ում գործող 059 մասնագիտական խորհրդի առջև՝ շնորհելու Աննա Հրանտի Ավետիսյանին՝ իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2024 թվականի հունվարի 4-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 4):

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Ս. Սարինյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝  
Հայ - Ռուսական (Սլավոնական)  
համալսարանի լեզվի տեսության և  
միջմշակութային հաղորդակցության  
ամբիոնի վարիչ,  
բ.գ.դ., պրոֆեսոր՝

*Ն. Ա.*

Ա. Ա. Սիմոնյան

Հաստատում եմ՝ 4 հունվարի 2024թ.

Հայ - Ռուսական (Սլավոնական)  
համալսարանի գիտական քարտուղար, բ.գ.թ.



Ռ. Ս. Կասաբաբովա